ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
# ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 044-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Ազգային ժողովի խորհուրդը որոշում է.

1. Ազգային ժողովի խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում լրագրողների հավատարմագրման կարգը հաստատելու մասին» թիվ 044-Լ որոշմամբ հաստատված հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 4-րդ կետի «եռօրյա» բառը փոխարինել «հնգօրյա» բառով:

2. Հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետում «(եթե հայրանունը նշված է անձնագրում),» բառերից հետո լրացնել «զբաղեցրած հաստիքը,» բառերը:

3. Հավելվածի 5-րդ կետի 5-րդ ենթակետում հանել «ու առկայության դեպքում՝ հեռապատճենների համարները» բառերը:

4. Հավելվածի 10-րդ կետում «ոչ լրատվական-վերլուծական» բառերից հետո լրացնել «կամ երգիծական բնույթի» բառերը:

5. Հավելվածի 15-րդ կետի առաջին նախադասությունում «եռօրյա» բառը փոխարինել «հնգօրյա» բառով:

6. Հավելվածի 20-րդ կետում հանել «Հերթական և արտահերթ նստաշրջաններից դուրս ժամանակահատվածում Ազգային ժողովում լուսաբանման ենթակա միջոցառումներին մասնակցելու նպատակով Աշխատակազմը հավատարմագրված լրագրողին կարող է տրամադրել անցագիր:» նախադասությունը:

7. Հավելվածի 22-րդ կետում լրացնել նոր՝ 4.1-ին ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.1) իր մասնագիտական գործունեությունն իրականացնել Ազգային ժողովի նստավայրում առանձնացված հատուկ տեղերում՝ նիստերի դահլիճի դիմաց գտնվող սրահում, օթյակում և Ազգային ժողովի այգում.»:

8. Հավելվածում լրացնել նոր՝ 22.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ազգային ժողովի պատգամավորների աշխատասենյակներում լրագրողները կարող են մասնագիտական գործունեություն իրականացնել միայն պատգամավորների համաձայնությամբ:»:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ** **Ա. ՍԻՄՈՆՅԱՆ**

**2021 թվական, օգոստոսի 18**
**Երևան**
**ԱԺԽՈ-001-Լ**